Community-led Urban Strategies in Historic Towns (COMUS)

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

«Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) ծրագիր

Գյումրու քաղաքային ժառանգության կենտրոնի հիմնում

Իրագործելիության ուսումնասիրություն

Բովանդակություն

1. Վայրի անունը 3
2. Ամփոփագիր 4
2.1 Ներածություն 4
2.2 Ծրագրի նպատակը 4
2.3 Վայրի բնույթը ու նշանակությունը և դրա նկատմամբ սեփականության իրավունքը 4
3. Վայրի ներկա վիճակը 10
4. Առաջարկներ ապագայի համար. նախատեսված ծրագիր 11
4.1 Հնարավոր ներդրողներ 11
4.2 Ծրագրի իրականացման գործընթացի կազմակերպում 12
5. Ծրագրի կառավարումը՝ պարտականություններ և մեխանիզմներ 13
5.1 Առաքելություն 13
5.2 Կառուցվածքը 13
Կենտրոնը բաղկացած կլինի տարբեր գործառույթներ իրականացնող բաժիններից՝ 13
5.3 Կառավարում 16
6. Ռիսկեր 18
7. Հիմնական շահառուներ 19
8. Ծրագրերի նպատակային ազդեցությունը 20
9. Հուշարձանի կամ վայրի երկարաժամկետ կայուն կառավարումը 21
10. Գործողությունների ծրագիր 22
11. Մոտավոր բյուջե (2017-2018 թթ. համար) 23
12. Գրականության ցանկ 24
13. Պատասխանատու մարմին 24
14. Տեղեկությունները կազմող կազմակերպության անվանումը 24
15. ԻՈՒ իրականացնող անձ 24

1. Վայրի անունը

Գյումրու քաղաքային ժառանգության կենտրոն

Նկ.1. Գյումրի (ընդհանուր տեսարան)

2. Ամփոփագիր

2.1 Ներածություն

Գյումրի քաղաքը գտնվում է ՀՀ Շիրակի մարզում և ունի դարերի խորքից եկող պատմություն: Այս տարածքից են հայտնաբերվել մ.թ.ա. 3-րդ հազարամյակից սկսած մինչև ուշ միջնադարին պատկանող հնագիտական իրեր: Հնում ստացած Կումայրի անվանումը հիշատակվում է նաև հույն պատմիչ և զորավար Քսենոֆոնի «Անաբասիս» աշխատության մեջ: Գյումրին զարգացում ստացավ XIX դարում, երբ ընդգրկվեց Ցարական Ռուսաստանի կազմի մեջ: Ինչպես խորհրդային ժամանակներում, այնպես էլ ներկայումս, քաղաքը հանդիսանում է Հայաստանի մշակութային ամենավառ կենտրոններից մեկը: Այն աչքի է ընկնում ուրույն խոհանոցով, հումորով, ճարտարապետությամբ, ավանդական արհեստներով, հայտնի մարդկանցով:

Քաղաքի միջուկն է կազմում «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոցը, որտեղ տեղակայված են XIX դ. կառուցված շինություններ՝ իրենց հատկանշական ճարտարապետական ոճով և քաղաքաշինական ամբողջականություն ներկայացնող կառուցապատված միջավայրով (եկեղեցիներ, թանգարաններ, բնակելի տներ և շենքեր, հիվանդանոցներ):

Ունենալով բազմադարյա մշակույթ և հանդիսանալով հայերի սիրված քաղաքներից մեկը, ուր այցելում են բազմաթիվ զբոսաշրջիկներ տարբեր վայրերից՝ անհրաժեշտություն առաջացավ ցույց տալ Գյումրի քաղաքի համապարփակ ու բազմաբովանդակ ժառանգությունը: Այսպիսով քաղաքային ժառանգության կենտրոնի ստեղծումը կնպաստի Գյումրի քաղաքի պատմության և մշակույթի հանրահռչակմանը, զբոսաշրջային ուղիներում այն ընդգրկելուն, ինչպես նաև կխթանի քաղաքի տնտեսական և սոցիալական զարգացումը:

Իրագործելիության ուսումնասիրությունը վերլուծություն է, որը թույլ կտա գնահատել Գյումրիում քաղաքային ժառանգության կենտրոնի հիմնման հնարավորությունը՝ Գյումրին էլ ավելի ճանաչելի ու հրապուրիչ դարձնելու նպատակներին և արդյունքներին հասնելու համար: Ժառանգության կենտրոնի հիմնման գաղափարը ընտրվել է նախաձեռնող խմբի՝ COMUS ծրագրի կողմից, նախնական տեխնիկական գնահատման հիման վրա, որտեղ հաշվի են առնվել հիմնական չափորոշիչները՝

- կենտրոնի դերն ու պարտականությունները,
- ռազմավարական նկատառումները /կիրառությունը, օգտագործողները, լսարանը, շուկան/,
- կարիքները և պահանջները,
- սոցիալ-տնտեսական ազդեցությունը,
- առաջարկվող ծրագրի նպատակային ազդեցությունը /կառավարում/:

Ուսումնասիրությունը ընդգրկում է Միջոցառումների ծրագիրը (Կետ 10) և Ենթադրվելիք բյուջեն (Կետ 11)՝ 3 413 600 եվրո գումարով:

2.2 Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակը քաղաքային զարգացումները վերլուծող և պլանավորող բազմաֆունկցիոնալ կենտրոնի ստեղծումն է, որի միջոցով հնարավորություն կընձեռնվի փաստագրել, պահպանել, իրազեկել, հանրահռչակել և վերարժևորել, ինչպես նաև կազմել, կառուցել, համակարգել և իրականացնել քաղաքի պատմական տեսքը չխեղաթյուրող քաղաքաշինական, ճարտարապետական, ինժեներական ծրագրերը և աջակցել քաղաքապետարանին իրականացնել իրենց նպատակները:

Այդ իսկ պատճառով դիտարկվել են հնարավոր ռիսկերը, հնարավորությունները, կատարվել է նաև SWOT վերլուծություն, մշակվել են հետագա նպատակային ու շահավետ կառավարումն իրականացնելու ուղիները: Այս գործիքների միջոցով կհիմնվի քաղաքային ժառանգության կենտրոն, որի միջոցով հնարավոր կլինի հանրահռչակել քաղաքի պատմությունն ու մշակույթը և այն փոխանցել սերունդներին:

2.3 Վայրի բնույթը ու նշանակությունը և դրա նկատմամբ սեփականության իրավունքը

Գյումրու պատմական ժառանգությունը կարևոր դեր է խաղում ոչ միայն գյումրեցիների, այլ նաև հայերի արժեհամակարգում՝ այն ասոցացնելով ուրույն ճարտարապետական կառույցների, մշակույթի,

սովորույթների հետ, որով հարուստ է Գյումրին: Այն նաև անվանում են արհեստների և արվեստների քաղաք, որը չի կարելի խառնել մեկ այլ վայրի մշակույթի հետ: Ձիթողցոնց տունը, Ծիրազի տուն-թանգարանը, Մերկուրովների տուն-թանգարանը և այլ հուշարձաններ, որոնք կառուցվել են Գյումրիում XIX-XX դդ. ավանդական՝ սև, երբեմն նաև կարմիր տուֆ քարով, փայտո պատշգամբները և պատուհանները, զարդաքանդակները, ներքին բակերը բնորոշ են և հատկորոշ Գյումրիի համար:

Չնայած Գյումրիում գտնվող պատմության թանգարանին կամ պատմությունը ներկայացնող այլ կազմակերպություններին, քաղաքի պատմական ժառանգության հավաքագրումը, ուսումնասիրումը և, ամենակարևորը, հանրահռչակումը, մնում է բաց: Կարծես բոլորը գիտեն Գյումրվա պատմական ժառանգության մասին, սակայն միևնույն ժամանակ դրա մասին ոչինչ հայտնի չէ թե տեղացիներին, թե արտասահմանցի զբոսաշրջիկներին, իսկ եղած գրականությունը և տեղեկատվությունը սուղ է և ոչ մատչելի: Գյումրեցիներն իրենց պատմության և մշակույթի մասին պատմում են իրենց նախնիներից փոխանցված պատմություններով, որոնք մեծամասամբ չի կարող հավաստի լինել, իսկ պատմական ճարտարապետական կառույցները շատ անգամ մեզ են հասել արդեն աղավաղված կամ լրիվ վերացած տեսքով:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ, հրատապ և արդիական է Գյումրի քաղաքի ժառանգության կենտրոնի հիմնումը, որը կզետեղվի Գյումրու պատմական կենտրոնի՝ կումարի արգելոցի տարածքում տեղակայված մի քանի հուշարձան շենքերում:

Ընտրվել են 3 հուշարձան շենքեր, որոնք կառուցվել են 19-րդ դարի վերջին 20-րդ դարի սկզբին՝ Գյումրու ավանդական ճարտարապետությամբ: Այդ շենքերում կենտրոնի տարբեր բաժինների տեղակայումը կնպաստի քաղաքային կյանքի զարգացմանը, նոր աշխատատեղեր կստեղծի, իսկ շենքերը կսկսեն բազմաֆունկցիոնալ աշխատել և շահագործվել, ինչը կնպաստի ոչ միայն տուրիզմի ու ինֆրաստրուկտուրայի զարգացմանը, այլ նաև կբերի շահույթ ու նոր կյանք կտա հուշարձան շենքերին: Մեծամասամբ այն հուշարձան շենքերը մասնավոր սեփականություն են, սակայն կարելի է առաջարկել սեփականատերերին դրանք նորովի օգտագործել, կամ հանձնել վարձակալությամբ , կամ վաճառել նոր սեփականատերերի, որոնք ցանկություն կհայտնեն հուշարձան շենքերը օգտագործել համապատասխան նպատակով, շահույթ ստանալ իրենց և պետության համար:

Ընտրված հուշարձաններն են.

ա) Վարպետաց 119 հուշարձանը գտնվում է քաղաքապետարանից ոչ հեռու: Երկհարկանի բնակելի տունը կառուցվել է XIX դ. և հիմավերականգնման և օգտագործման կարիք ունի (կիսաքանդ է): Հուշարձանը տեղական նշանակության է, որտեղ 1980-ական թվականներին նկարահանվել է "Կտոր մը երկինք" հայտնի ֆիլմը: մասնավոր սեփականություն է:

Նկ. 2, 3, 4. Բնակելի տուն Վարպետաց 119 հասցեում, Լուս.՝ Ա. Միրզոյան, 2017

բ) Շիրազի (Գորկի) 30 հասցեում գտնվող հուշարձանը գտնվում է քաղաքապետարանից և վարպետաց 119 բնակելի տնից ոչ հեռու: Այն կառուցվել է XIX դ. և տեղական նշանակության հուշարձան է: Նախկինում այստեղ եղել է "Գյումրի" ռեստորանը: Ներկայումս այն վերականգնման և օգտագործման կարիք ունի: Հուշարձանի մի մասը մասնավոր սեփականություն է, իսկ մյուսը պատկանում է քաղաքապետարանին:

Նկ. 5, 6, 7, 8, 9. Բնակելի տուն և ռեստորան Շիրազի 30 հասցեում, Լուս.՝ Լ. Իգիթյան, 2016 և Ա. Միրզոյան, 2017

գ) Շիրազի (Գորկի) 90 հուշարձանը գտնվում է Շիրազի 30 հուշարձանից ոչ հեռու: Բնակելի տունը կառուցվել է XIX դ. և տեղական նշանակության է: Տունը խարխուլ է և բնակեցված: Մասնավոր սեփականություն է:

Նկ. 10, 11, 12, 13, 14. Բնակելի տուն Շիրազի 90 հասցեում, Լուս.՝ Լ. Իգիթյան, 2016 և Ա. Խաչատրյան, 2017

Ճարտարապետական հուշարձանների բնույթը և նշանակությունը, որոնք ընտրվել են ժառանգության կենտրոնի համար ներկայացնում են Գյումրի քաղաքի պատմությունն ու մշակույթը՝ իր ուրույն գույնով, ավանդույթներով, գեղագիտությամբ և ցույց տալիս Գյումրու XIX-XXդդ. ավանդական ճարտարապետությունը՝ կառուցված սև տուֆ քարով և փայտե ավանդական պատշգամբներով, պատուհաններով, զարդանախշերով և այլն:

3. Վայրի ներկա վիճակը

Ներկայումս ընտրված շենքերի վիճակը վթարային վիճակում է, որը 1988 թ. ավերիչ երկրաշարժի հետևանք է: Հետերկրաշարժյան ժամանակաշրջանում Գյումրին չվերականգնվեց և վիճակն ավելի վատթարացավ: Երկրաշարժից հետո մարդիկ կանգնեցին բնակարաններ ունենալու խնդրի առջև և ոմանք լքեցին քաղաքը՝ վաճառելով իրենց ունեցվածքը:

Կենտրոնի բաժինների տեղակայումը պետք է լինի հեշտ գտնվող հասցեներում և կենտրոնական (պատմական) փողոցներում: Անհրաժեշտություն կլինի նաև տեղակայել կենտրոնի տեղադիրքը և բաժինները ցույց տվող վահանակներ, պաստառներ և մոտեցման ուղիներ, որպեսզի դրանք տեսանելի, հասանելի ու մատչելի լինեն այցելուների համար: Անհրաժեշտ է դրանք նաև համապատասխանաբար կահավորել՝ աշխատակիցների համար ստեղծելով հարմարավետ պայմաններ աշխատելու և հանգստանալու համար:

4. Առաջարկներ ապագայի համար. նախատեսված ծրագիր

4.1 Հնարավոր ներդրողներ

Առաջարկվում է կենտրոնի վերանորոգման և վերազինման համար ընդգրկել

- պետական կառույցները՝ մասնավորապես ՀՀ կառավարություն, Գյումրու քաղաքապետարանը, ՀՀ մշակույթի նախարարությունը, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության կոմիտեն,
- բոլոր շահագրգիռ անհատներին (տեղական և սփյուռքահայ գործարարներ) և կազմակերպություններին («Հայաստան» հիմնադրամ, «Գյումրիի ընկերներ» և այլն),
- միջազգային դոնոր կազմակերպությունների՝ Համաշխարհային բանկ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, Ասիական զարգացման բանկ և այլն միջոցներով:

Ծրագիրն իրականացնողները՝

Քայլ 1. Ծրագրի ֆինանսական ներդրումներն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության կողմից առաջարկվում է ստեղծել Հիմնադրամ, ուր իրենց ներդրումները կկատարեն շահագրգիռ անձինք, գործարարներ, կազմակերպություններ, հուշարձանների սեփականատերեր՝ իրենց գույքով կամ առանց:

Քայլ 2. Ծրագրի իրականացման և նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է ստեղծել հանձնաժողով, որոնք կունենան աշխատանքների կատարման հստակ ժամկետներ և պարտականություններ: Հանձնաժողովում անհրաժեշտ կլինի մեծամասամբ ընդգրկել պետական ոլորտի աշխատակիցների, որոնք իրենց համաձայնությամբ կաշխատեն և չեն վարձատրվի լրացուցիչ՝ Գյումրու քաղաքապետարանից, Շիրակի մարզպետարանից, ՀՀ կենտրոնական բանկից, ՀՀ մշակույթի նախարարությունից, Երևանի պետական համալսարանից, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանից: Հանձնաժողով կհրավիրվեն մասնագետներ, որոնք իրենց ոլորտներում փորձ ունեն: Հանձնաժողովը իր աշխատանքները կսկսի հանդիպումներից, որտեղ կհստակեցվեն ծրագրի իրականացման խնդիրները, նպատակները, ակնկալվող արդյունքներին հասնելու գործիքները, փուլերը, ժամկետները, ֆինանսավորումը:

Անհրաժեշտ է ընդգրկել հետևյալ մասնագետներ `

- ծրագրի համակարգող,
- խորհրդատուներ,
- պատմաբաններ,
- արվեստաբաններ,
- շինարարներ,
- ճարտարապետ,
- բնապահպաններ,
- սոցիոլոգներ,
- հոգեբաններ,
- թանգարանագետներ,
- գիդեր,
- գրաֆիկ և վեբ դիզայներներ:

Ծրագրի համակարգողը պետք է վճարվի (տես կետ 11), քանի որ նրա աշխատանքը ավելի պատասխանատու է և երկարաժամկետ:

Քայլ 3. Առաջարկվում է գաղափարի շուրջ համախմբել և մասնակից դարձնել երիտասարդ կամավորների, որոնք կզբաղվեն ժառանգության կենտրոնի ստեղծման, ապա նաև դրա աշխատանքների կազմակերպման ու իրականացման գործով: Կամավորները կարող են լինել ավագ դպրոցի աշակերտները, բուհերի ուսանողները և այլոք: Նրանք կարող են կազմակերպել գումար հավաքելու համար բարեգործական միջոցառումներ՝ համերգներ, իրենց ձեռքերով պատրաստած նվերների ցուցահանդես-վաճառք: Կամավորներ կարող են դառնալ բոլոր այն երիտասարդները, որոնք ցանկանում են մասնագիտանալ մշակույթի կառավարման և մշակութային ծրագրերի կառավարման ոլորտում: Երիտասարդ կամավորների համար կկազմակերպվեն հանդիպումներ՝ ծրագրի նպատակներին, ֆունկցիաների իրականացման, մեխանիզմների, շփումների իրականացման և բանավիճելու հմտություններին ծանոթանալու համար: Երիտասարդ կամավորականները կինտեգրվեն կենտրոնի և այլ կազմակերպությունների միջև կապ ստեղծելուն:

Քայլ 4. Գյումրու բնակիչների համար կկազմակերպվեն ·Հաշվետու օրեր·, որոնց ընթացքում կներկայացվի ծրագիրը (առաջնահերթությունները, ընտրությունը) և հավաքված գումարը: Այս միջոցառումը կնպաստի ոչ միայն լրացնել բացթողումները, այլև ավելի շատ մարդկանց կինտեգրի գործողություններում ու աշխատանքներում: Բոլոր հետաքրքրված ու շահագրգիռ մարդիկ կարող են մասնակից դառնալ՝Հիմնադրամի հաշվին փոխանցելով իրենց լուման:

4.2 Ծրագրի իրականացման գործընթացի կազմակերպում



Նկ. 15. Պատին փակցված արտահայտություն Գյումրու բարբառով, Լուս.՝ Ա. Քրուզ, 2016

Քաղաքային ժառանգության կենտրոնի ստեղծումը կնպաստի ոչ միայն Գյումրի քաղաքի պատմությանն ու մշակույթին վերաբերող տեղեկատվության հավակագրմանը և մեկ միասնական շտեմարանի ստեղծմանը, այլ նաև քաղաքի հուշարձանների և մշակույթի հանրահռչակմանը, քաղաքի պատմական միջավայրի վերականգնմանը, կառավարմանը, բարենպաստ զարգացմանը: Քաղաքային ժառանգության կենտրոնի ստեղծմամբ կբացվեն նոր աշխատատեղեր, իսկ երիտասարդները անմիջականորեն կընդգրկվեն իրենց հայրենի քաղաքի հետագա զարգացման գործընթացին, ինչը կնպաստի ու կխթանի բնակչության կենսամակարդակի աճին և կկրճատի երիտասարդների միգրացիան:

Քաղաքային ժառանգության կենտրոնի հիմնումը երկարաժամկետ գործընթաց է, ինչը ենթադրում է փուլային իրականացում: Առաջարկվում է.

1. իրականացնել տարածքի ուսումնասիրում և չափագրում,
2. կատարել հուշարձան շենքերի և դրանց տարածքի նախագծային աշխատանքներ՝ հաշվի առնելով կենտրոնի բաժինների պահանջվող չափորոշիչները,
3. իրականացնել վերականգնողական և շինարարական աշխատանքներ,
4. կատարել հարդարման աշխատանքներ՝ հաշվի առնելով արտաքին և ներքին լուսավորությունը ու ինժեներական համակարգերի մոնտաժումը,
5. իրականացնել կահավորման աշխատանքներ,
6. զինել համապատասխան տեխնիկայով (համակարգիչներ, պատճենահանման սարքեր, սքաներներ, լուսանկարչական ապարատներ, թուղթ և այլն),
7. ապահովել կենտրոնի երկարաժամկետ կառավարումը և բնականոն աշխատանքը:

5. Ծրագրի կառավարումը՝ պարտականություններ և մեխանիզմներ

Ժառանգության կենտրոնի հիմնման գործընթացը երկարաժամկետ է և պահանջում է բավականաչափ ներդրումներ, որը ենթադրում է կենտրոնի ստեղծման գործընթացին միտված փուլային աշխատանքների իրականացում: Ուստի անհրաժեշտությունից և հրատապությունից ելնելով՝ առաջարկվում է նախ և առաջ հստակեցնել գործունեության ոլորտները՝ առաքելությունը, կառուցվածքը, կառավարման և հաշվետվությունների սկզբունքն ու չափորոշիչները:

Առաջարկվում է Քաղաքային ժառանգության կենտրոնը հիմնել որպես առանձին իրավաբանական մարմին, որի հիմնման աշխատանքները կֆինանսավորվեն ՀՀ կառավարության կողմից ստեղծված Հիմնադրամի հավաքած գումարով, իսկ այնուհետև մասամբ կֆինանսավորվեն պետության, մասամբ կենտրոնի ինքնաֆինանսավորմամբ (ստացած շահույթից): Կենտրոնի հետագա աշխատանքները կուղղվեն նաև շահույթ ստանալուն, որով կփակվեն ներդրված ծախսերը և խթան կհանդիսանա կենտրոնի արդյունավետ աշխատանքի շարունակականության համար:



Նկ. 16. Պատին փակցված գրություն Գյումրու բարբառի վերաբերյալ, Լուս.՝ Լ. Իգիթյան, 2016

5.1 Առաքելություն

Կենտրոնը կնպաստի Գյումրի քաղաքի ժառանգության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրմանը, բուկլետների, գրքերի և էլեկտրոնային կայքի միջոցով հրապարակմանը՝ սրանով իսկ հանրահռչակելով քաղաքն ու դրա պատմամշակութային բնույթը, ինչը հնարավորություն կտա Գյումրին ընդգրկել զբոսաշրջային ուղիներում և փաթեթներում:

5.2 Կառուցվածքը

Կենտրոնը բաղկացած կլինի տարբեր գործառույթներ իրականացնող բաժիններից՝

ա) Ռեսուրսային և տեղեկատվության տրամադրման կենտրոնները առաջարկվում է տեղակայել Վարպետաց 119 հասցեում գտնվող հուշարձան շենքի (Նկ. 2, 3, 4) տարածքում, որը մասնավոր սեփականություն է և չբնակեցված: Շենքն այժմ կիսավեր վիճակում է գտնվում:

Ռեսուրսային կենտրոնը կհանդիսանա նյութերի և տեղեկատվության հավաքագրման, արխիվացման, մշակման, թվայնացման, տարածման, հանրահռչակման (սոցցանցերի և կայքերի գովազդների միջոցով) վայր: Ռեսուրսային կենտրոնում աշխատելու են պատմաբաններ, ճարտարապետներ, վեբ դիզայներներ, ծրագրավորողներ: Ռեսուրսային կենտրոնը համապատասխան նյութեր է ձեռք բերելու Հայաստանի պետական արխիվից, ՀՀ մշակույթի նախարարության համապատասխան ստորաբաժանումներից, Կումայրի պատմաճարտարապետական արգելոցից, Գյումրու պատմության թանգարանից և համապատասխան այլ աղբյուրներից: Առաջարկվում է այստեղ հիմնել նաև տպարան Քաղաքային ժառանգության կենտրոնի նյութերի և այլ անձանց ու կազմակերպությունների կողմից տպագրության պատվերներ ընդունելու և իրականացնելու համար:

Տեղեկատվության տրամադրման գոտուց զբոսաշրջիկները հնարավորություն կունենան ստանալ քաղաքի պատմական և տեսարժան վայրերի մասին տեղեկատվություն: Տեղեկատվությունն

այցելուներին կտրամադրվի տպագիր ձևով՝ համապատասխան քարտեզագրությամբ և ուղենիշներով, այնպես էլ էլեկտրոնային հավելվածի ներբեռնման միջոցով: Տեղեկատվության տեղադրման գոտին կառաջարկի ·Նեթվորք արշավ· փաթեթը՝ ակտիվ ապրելակերպով զբաղվող Գյումրիի և այլ վայրերի գործարարների, տարբեր մարմինների ու կազմակերպությունների ու անհատների համար, որի շրջանակներում կկազմակերպվեն արշավներ Հայաստանի տարբեր պատմական վայրեր, որոնց ընթացքում կտեղծվի հարթակ /պլատֆորմ/ շփման, համագործակցության, փորձի փոխանակման նպատակով՝ միմյանց հետ կապելով քաղաքները և գյուղերը:

Կենտրոնների տրամադրած ծառայություններից ստացած գումարը կուղվի աշխատակիցների աշխատավարձի և ծախսերը փակելու համար: Քանի որ շենքը չբնակեցված և խարխուլ է, ենթադրվում է, որ ներկայիս սեփականատերը միջոցներ չունի այն վերականգնելու համար: Ուստի առաջարկվում է ներկայիս սեփականատիրոջը շենքը գնելու վերաբերյալ առաջարկ կատարել:

SWOT	
ուժեղ կողմեր	**թույլ կողմեր**
▪ քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ու վայրերի մասին տեղեկատվության հավաքագրում և արխիվացում, ▪ հանրահռչակում մեկ տեղում, ▪ հուշարձան-շենքի վերականգնում, ▪ միասնական շտեմարանի ստեղծում, ▪ արշավների կազմակերպում տարբեր պատմական վայրեր, ▪ նոր շփումների, ▪ հաղորդակցման, համագործակցության, կապերի հաստատման հնարավորություններ	▪ արխիվային նյութերի տրամադրման հետ կապված խնդիրներ, ▪ նյութերի սակավություն, ▪ համապատասխան մասնագետների բացակայություն ծառայությունների մատուցման ոլորտում, ▪ գիդերի պակաս
հնարավորություններ	**սպառնալիքներ**
▪ քաղաքի պատմության և մշակույթի մասին տեղեկատվության թվայնացում, ▪ նոր գիտելիքների, հմտությունների և գործընկերների ձեռքբերում, ▪ նոր աշխատատեղերի ստեղծում, ▪ երիտասարդ մասնագետների փորձի ձեռք բերում	▪ համապատասխան տեխնիկական միջոցների սղություն, ▪ արխիվային նյութերի տրամադրման դիմաց մեծ գումարի պահանջ, ▪ մատուցված ծառայությունների ցածր որակ, ▪ թվով քիչ մարդկանց ինտեգրում, ▪ ծառայության դիմաց բարձր գներ, ▪ օտար լեզվի ու հաղորդակցման ոչ հմուտ մասնագետների առկայություն, ▪ ցածր աշխատավարձ, ▪ քիչ պատվերներ, ▪ սակավ այցելուներ

բ) Հանդիպումների և այցելուների գոտի – առաջարկվում է այն տեղակայել Շիրազի 30 հասցեում գտնվող հուշարձան շենքում (Նկ. 5, 6, 7, 8, 9), որն այժմ չբնակեցված է և խարխուլ: Շենքի վերականգնման աշխատանքների իրականացումից հետո այստեղ մի մասում (հանդիպումների գոտի) կարող է տեղադրվել հեռուստա- և ռադիո հաղորդումների ստուդիաներ, հանդիպումների, քննարկումների, բանավեճերի, գիտական կոնֆերանսների, ոչ ֆորմալ դասընթացների, սեմինարների (workshop) կազմակերպման սրահներ: Հանդիպումների գոտում պարբերաբար կազմակերպվող

միջոցառումներն ի հայտ կբերեն քաղաքի պատմությանն ու մշակույթին միտված խնդիրները, որոնք տեղ կգտնեն ժառանգության կենտրոնի ռազմավարության մեջ՝ նպատակներին և արդյունքներին հասնելու համար: Առաջարկվում է գոտին վարձակալությամբ տրամադրել տարբեր կազմակերպությունների՝ այստեղ տարատեսակ պատմամշակութային հաղորդումներ, հանրային լսումներ, սեմինարներ, կոնֆերանսներ, ֆիլմերի ցուցադրություններ և քննարկումներ, ինչպես նաև ոչ ֆորմալ դասընթացներ կազմակերպելու համար (նման գոտու խնդիր կա Գյումրիում):

Մյուս հատվածը (այցելուների գոտի) առաջարկվում է օգտագործել որպես ցուցասրահ-խանութ, որտեղ կցուցադրվեն և կվաճառվեն Գյումրու ավանդական արհեստների ավանդույթներով պատրաստված, բայց մեր օրերի երիտասարդ մասնագետների ձեռքի աշխատանքները, ինչպես նաև այցելուներին հնարավորություն կընձեռվի ինտեգրվել Գյումրու ավանդական արհեստներին և արվեստին: Այստեղ հնարավոր կլինի հանդիպել այն վարպետներին և արվեստագետներին, որոնց աշխատանքները ցուցադրված են, շփվել նրանց հետ, ստանալ մասթեր-կլաս: Այցելուների կենտրոնում մշտական կգործեն մանկական խմբակներ, որտեղ երեխաները հնարավորություն կունենան անմիջականորեն մանուկ հասակից շփվել արվեստի հետ (նախատիպն արդեն կա, տես https://haypopup.com/): Իսկ երիտասարդների համար կկազմակերպվեն Արվեստի պատմության, Գյումրու պատմության և արհեստների, Գյումրու մշակույթի պատմության դասընթացներ:

Բացի դրանից այստեղ կարելի է տեղակայել նաև փոքրիկ սրճարան, որը նաև կվերականգնի նշյալ հուշարձանի նախկին ֆունկցիոնալ կիրառումը: Քանի որ շենքը չբնակեցված և խարխուլ է, ենթադրվում է, որ ներկայիս սեփականատերը միջոցներ չունի այն վերականգնելու համար: Ուստի առաջարկվում է ներկայիս սեփականատիրոջը շենքը գնելու վերաբերյալ առաջարկ կատարել:

SWOT	
ուժեղ կողմեր	**թույլ կողմեր**
▪ հուշարձանի վերականգնում, ▪ տարատեսակ պատմամշակութային հաղորդումների պատրաստում, ▪ կոնֆերասների, հանրային լսումների, ոչ ֆորմալ դասընթացների կազմակերպում, ▪ արվեստի գործերի ցուցադրություն և վաճառք, ▪ մանկական խմբակների կազմակերպում	▪ փորձարու թրեյներների մասնագետների պակաս, ▪ համապատասխան դասընթացների ծրագրերի բացակայություն
հնարավորություններ	**սպառնալիքներ**
▪ քաղաքի պատմության և մշակույթի մասին նոր հաղորդումների պատրաստում և հանրահռչակում, ▪ նոր գիտելիքների և հմտությունների ձեռքբերում, ▪ ծանոթություն արվեստին, պատմությանը և մշակույթին ու դրանց հանրահռչակում, ▪ նոր աշխատատեղերի ստեղծում, ▪ նպաստում մանուկ և երիտասարդ սերնդի զարգացմանը	▪ քաղաքակիրթ բանավիճելու հմտություններ, ▪ թվով քիչ մարդկանց ինտեգրում, ▪ ծրագրերի աննպատակային կամ վատ գովազդ, ▪ հեռուստահաղորդումների սակավություն, ▪ ոչ որակյալ ուսուցման մեթոդիկա, ▪ բարձր գներ

Տարածքի վարձակալությունից, արվեստի գործերի վաճառքից, դասընթացներից և խմբակներից ստացած շահույթը կօգտագործվի կենտրոնի ծախսերի և աշխատակիցների աշխատավարձի և տարածքի պայմանների բարելավման համար:

գ) Գրախանութ-գրավաճառը նախատեսվում է տեղակայել Շիրազի 90 հուշարձան-շենքում (Նկ. 10, 11, 12, 13, 14), որը մասնավոր սեփականություն է: Այն մասնավոր սեփականություն է, որը քանդվել է այլ շինությունների կառուցումից: Տեղական նշանակության հուշարձան է:

Այստեղ կանցկացվեն ոչ միայն գրքերի վաճառք, այլ նաև տեղի կունենան գրքերի շնորհանդեսներ, հանդիպումներ ժամանակակից գրողների հետ: Գրախանութը գրքերով ապահովելու պարտականությունը կստանձնի ՀՀ մշակույթի նախարարությունը: Այս կենտրոնը կարող է դառնալ վայր, ուր տեղացիները կկարողանան ներկայացնել իրենց ստեղծագործությունները՝ վեպեր, բանաստեղծություններ, պատմվածքներ, գիտական և ոչ գիտական հոդվածները և այլն: Կենտրոնը կարող է առաջարկել նաև ստեղծագործական դասընթացներ տարբեր մարդկանց համար՝ երեխաներ, երիտասարդներ, մասնգետներ, ավելի մեծ տարիքային խումբ: Այստեղ կարող է հիմնվել "Գյումրու գրողների ընկերություն" կազմակերպությունը, որը կզբաղվի երիտասարդ ժամանակակից գյումրեցի գրողների աշխատանքների հավաքագրումով/խմբագրմամբ երեք հիմնական թեմաների շուրջ՝ հետխորհրդային ժամանակի, երկրաշարժյան և հետերկրաշարժյան ժամանակաշրջանի և ներկայիս ժամանակի: Կենտրոնը յուրաքանչյուր տարի կարող է երիտասարդների և դպրոցականների համար գրական ելույթներ կազմակերպել: Մարդիկ կարող են տոմս գնել՝ մասնակցելու միջազգային գրական հանդիպումների համար:

Հաշվի առնելով հուշարձան-շինության մասնավոր սեփականատերերի անկարողությունը վերականգնելու այն (ֆինանսական միջոցների բացակայություն), առաջարկվում է Գյումրու քաղաքապետարանին սեփականատիրոջը վճարել տան արժեքին համապատասխան գումար կամ հատկացնել համարժեք բնակարան քաղաքապետարանի բնակֆոնդից:

SWOT	
ուժեղ կողմեր	**թույլ կողմեր**
▪ հուշարձան-շենքի վերականգնում և վերօգտագործում, ▪ գրախանութ-գրավաճառի հիմնում, ▪ ծանոթացում ժամանակակից գրողների հետ	▪ սուղ միջոցներ, ▪ սեփականատիրոջ անհամաձայնություն կամ մեծ գումարի դիմաց վաճառքի առաջարկ, ▪ քիչ մարդկանց այցելություն
հնարավորություններ	**սպառնալիքներ**
▪ մշակութային և գիտական վայրի ստեղծում, ▪ գրքի քննարկումներ, ▪ հանդիպումներ հեղինակների հետ, ▪ նոր աշխատատեղերի ստեղծում	▪ վերականգնողական աշխատանքների երկարաձգում, ▪ շենքի ոչ նպատակային օգտագործում, ▪ անշահավետություն գրքերի վաճառքից

5.3 Կառավարում

Ժառանգության կենտրոնի կառուցվածքային բաժինները միմյանց հետ պետք է փոխկապակցված գործունեություն ծավալեն՝ ելնելով իրենց գործառույթներից և դրված խնդիրներից: Այս բաժիններից մեկի աշխատանքի խափանումը կնվազեցնի մյուսների աշխատանքների արդյունավետությունը: Յուրաքանչյուր կես տարին առաջարկվում է հրավիրել համընդհանուր ժողով կենտրոնի գործունեության վերաբերյալ հաշվետվություն (ֆինանսական և ձեռք բերումներ (նոր ծրագրեր/բացթողումներ) ներկայացնելու նպատակով: Հաշվետվությունը ներկայացվելու է ինչպես պետական մարմիններին (Գյումրու քաղաքապետարան, ՀՀ մշակույթի նախարարություն, ՀՀ

կառավարությանն առընթեր քաղաքաշինության կոմիտե), այնպես էլ հասարակական (օրինակ՝ «Շիրակ կենտրոն» ՀԿ) և շահագրգիռ կազմակերպություններին ու անձանց:

Նկ. 17. Հայփ Փոփ Ափ Գելերի, Լուս.՝ Ա. Քրուզ, 2016

6. Ռիսկեր

- սեյսմիկ անկայուն վայր,
- սեփականատերերի անհամաձայնություն,
- տեխնիկական միջոցների սղություն,
- արխիվային նյութերի դժվարամատչելություն,
- արխիվային նյութերի դիմաց մեծ գումարի պահանջ,
- փորձառու թրեյներների պակաս,
- ոչ որակյալ ուսուցման մեթոդիկա,
- համապատասխան դասընթացների ծրագրերի բացակայություն,
- առաջարկվող ծրագրերի աննպատակային և վատ գովազդ,
- ցածր աշխատավարձ,
- քիչ պատվերներ,
- քիչ թվով մարդկանց ինտեգրում,
- օտար լեզվի և հաղորդակցման ոչ հմուտ մասնագետների ընդգրկում,
- մատուցած ծառայության բարձր գներ և ցածր որակ,
- պոտենցալ ներդրողների բացակայություն,
- քիչ թվով այցելություններ,
- մասնավոր սեփականության առկայություն,
- անշահավետություն գրքերի վաճառքից,
- երիտասարդների անհետաքրքրություն դեպի առաջարկը, և կրկին հուշարձանի լքում,
- խնդիրներ բնակիչների տարհանման հետ:

7. Հիմնական շահառուներ

Ծրագրի հիմնական շահառուներն են՝

- պետությունը,
- Գյումրու քաղաքապետարանը,
- աշխատակիցները,
- շահագրգիռ անձինք և կազմակերպությունները,
- անհատ և հասարակական կազմակերպությունները,
- երիտասարդները,
- ներդրողները,
- զբաստաշրջիկները:

8. Ծրագրերի նպատակային ազդեցությունը

Գյումրիում Քաղաքային ժառանգության կենտրոնի հիմնումը և կառավարումը կդառնա պիլոտային ծրագիր նմանատիպ պատմական վայրերի պատմական ժառանգության պահպանման և հանրահռչակման գործում Հայաստանի Հանրապետությունում, ինչը կխթանի նոր աշխատատեղերի ստեղծմանը, երիտասարդների կրթության մակարդակի բարձրացմանը և զբաղվածությանը, զբոսաշրջության և սոցիալ-տնտեսական զարգացմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, պատմության և մշակույթի պահպանմանը, օգտագործմանը, հանրահռչակմանը և շահութաբերությանը:

9. Հուշարձանի կամ վայրի երկարաժամկետ կայուն կառավարումը

Քաղաքային ժառանգության կենտրոնի հիմնման և կառավարման ծրագիրը համակարգվելու ու վերահսկվելու է ՀՀ կառավարության կողմից, որը նաև հանդիսանալու է ծրագրի պատասխանատուն: Ժառանգության կենտրոնի՝ որպես Գյումրի քաղաքի և առհասարակ Հայաստանի Հանրապետության պատմական ժառանգության պահպանման և հանրահռչակման միջոցի հիմնումից հետո անհրաժեշտ է ապահովել դրա երկարաժամկետ կայուն կառավարումը, որի նպատակներին և արդյունավետությանը հասնելու համար պետք է .

- բոլոր շահագրգիռ կողմերի կողմից բազմակողմանի և նույնանման ընկալվի Քաղաքային ժառանգության կենտրոնի հիմնման կարևորությունը, հրատապությունը և արդիականությունը,
- իրականացնել կողմերի միջև ծրագրի փուլային պլանավորում, իրականացվող աշխատանքների վերահսկում, գնահատման չափորոշիչներ և հետադարձ կապ,
- նոր գործընկերների և շահագրգիռ կողմերի ընդգրկում կենտրոնի հիմնման օժանդակման և զարգացման գործում,
- անհրաժեշտ ֆինանսավորման ներգրավում և ապահովում,
- մոնիթորինգի անցկացում և միտումների փոխազդեցության, փոփոխությունների ու ենթադրվող միջամտությունների գնահատում,
- անհրաժեշտ ֆինանսավորման ներգրավում և ապահովում,
- կենտրոնի գործառնական և նյութական պոտենցիալի զարգացում,
- աշխատակազմի մշտական վերապատրաստում,
- շահույթի ստացում:

10. Գործողությունների ծրագիր

Կենտրոնի հիմնմանն ուղղված աշխատանքները կսկսվեն 2017 թ. ապրիլ ամսից:

No	Գործունեության նկարագիր	Պատասխանատու անձ	Ժամանակացույց
1	Բանակցությունների փուլ ներկայիս սեփականատերերի հետ	Տեղական ինքնակառավարման մարմին, նոր սեփականատերեր	Ամիս 4 > Ամիս 6, 2017
2	Դրամահավաքի միջոցառումներ	Տեղական ինքնակառավարման մարմին, սոցիալական կազմակերպություններ	Ամիս 4 > Ամիս 6, 2017
3	Համագործակցություն դպրոցների հետ	Տեղական ինքնակառավարման մարմին, սոցիալական կազմակերպություններ	Ամիս 4 > Ամիս 5, 2017
4	Հանձնաժողովի աշխատանք	Տեղական ինքնակառավարման մարմին, սոցիալական կազմակերպություններ	Ամիս 4 > Ամիս 5, 2017
5	Ծրագրի կառավարման թիմ	Տեղական ինքնակառավարման մարմին, սոցիալական կազմակերպություններ	Ամիս 5 > Ամիս 7, 2017
6	Նախագծային աշխատանքների գնումների գործընթացի իրականացում	Տեղական ինքնակառավարման մարմին	Ամիս 5 > Ամիս 6, 2017
7	Նախագծային և հարդարման աշխատանքների իրականացում	Տեղական ինքնակառավարման մարմին, սոցիալական կազմակերպություններ	Ամիս 5 > Ամիս 6, 2017
8	Շինությունների չափագրություն	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	Ամիս 4 > Ամիս 6, 2017
9	Հուշարձան շենքերի վերականգնում	Տեղական ինքնակառավարման մարմին, մասնավոր սեփականատերեր	Ամիս 6 > Ամիս 12, 2017
10	Վերականգնողական աշխատանքների իրականացում	Տեղական ինքնակառավարման մարմին, մասնավոր սեփականատերեր	Ամիս 6 > Ամիս 12, 2017
11	Գույքի և տեխնիկական սարքավորումների գնում	Տեղական ինքնակառավարման մարմին, մասնավոր սեփականատերեր	Ամիս 1 > Ամիս 6, 2018

11. Մոտավոր բյուջե (2017-2018 թթ. համար)

No	Գործունեության ծախսեր	Միավոր	Միավորի քանակ	Միա-վորի գին	Արժեք
1	Ծրագրի կառավարման թիմ	ամիս	15	3,000 €	45,000 €
2	Փորձաքննություն	օր	20	200 €	4,000 €
3	Գնահատումներ (կարիքների, կառուցվածքային, տեխնիկական)	օր	15	200 €	3,000 €
4	Շինությունների չափագրություն	քմ	1 550	2 €	3,100 €
5	Վերականգնման դիզայն աշխատանքներ	քմ	980	50 €	49,000 €
6	Վերականգնման աշխատանքներ	քմ	980	2,000 €	1,960,000 €
7	Հարդարման աշխատանքներ	քմ	1200	500 €	600,000 €
8	Վերականողական աշխատանքներ	քմ	1 200	250 €	242,500 €
9	Կահույք, տեխնիկական սարքավորումներ	քմ	970	3,000 €	45,000 €
	Ընդամենը				**2,906,600 €**

12. Գրականության ցանկ

- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք,
- «ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին» ՀՀ օրենք,
- http://www.armenianheritage.org/hy/monument/Giumri-I/1288
- http://www.arlis.am/
- https://en.wikipedia.org/wiki/Gyumri
- ՆՏԳ՝ Գյումրու ճարտարապետության թանգարան (փորձագետ՝ Աշոտ Միրզոյան, էլ.հասցե՝ ashotmirzoyan@gmail.com)

13. Պատասխանատու մարմին

ՀՀ կառավարություն (հասցե՝ ՀՀ, ք. Երևան)

14. Տեղեկությունները կազմող կազմակերպության անվանումը

- Գյումրու քաղաքապետարան
- «Քաղաքային ուսումնասիրության կենտրոն» ՀԿ

Կոնտակտային անուններ.

- Հովհաննես Սահակյան (էլ.հասցե՝ hovhannessahakyan85@gmail.com)
- Աշոտ Միրզոյան (էլ.հասցե՝ ashotmirzoyan@gmail.com)

15. ԻՈՒ իրականացնող անձ

Փորձագետ՝ Լուսինե Իգիթյան (էլ.հասցե՝ igityluso@gmail.com)